Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի թեկնածու

ՊԱՀՊԱՆԵՆՔ ԵՎ ԶԱՐԳԱՑՆԵՆՔ

ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ
ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
(2021-2025)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի ընտրություն՝
2021թ. սեպտեմբերի 12

Հարգելի գործընկերներ,

Որոշել եմ առաջադրվել որպես ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թեկնածու: 2006 թվականից պատիվ ունեմ լինելու փաստաբանական համայնքի անդամ, 2009 թվականից հանդիսացել եմ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ, իսկ 2014 թվականից ղեկավարում եմ ՀՀ փաստաբանական դպրոցը: Շուրջ տասներկու տարիների ընթացքում անմիջական մասնակցություն եմ ունեցել մեր ինստիտուտի պահպանման և զարգացման բարդ գործընթացին: Ձեզ հետ միասին հաղթահարել ենք փաստաբանության առջև կանգնած բազում մարտահրավերներ և սպառնալիքներ:

Այսօր, փաստաբանությունն ակտիվ զարգացման շրջափուլում է: Տարիների ընթացքում Հայաստանում ներդրվել է հանրային պաշտպանության առանձնահատուկ կառուցակարգ, հիմնադրվել է Փաստաբանական դպրոցը, ստեղծվել և հաջողությամբ գործում են փաստաբանական գործունեությանն աջակցող տարբեր ստորաբաժանումներ (փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողով, արագ արձագանքման հանձնախումբ, գիտավերլուծական կենտրոն, ակումբ և այլն): Փաստաբանների պալատի ստորաբաժանումների մոդելները միջազգային գործընկերների կողմից դիտարկվում են օրինակելի: Տարիների ընթացքում մեր համայնքում ձևավորվել են ինստիտուտն ամրապնդող ավանդույթներ, մենք արդեն ունենք մասնագիտության օր:

Հասարակությունն օր օրի ավելի լիարժեք է ընկալում փաստաբանի առաքելությունը, նրա դերը հասարակության կյանքում և մարդու իրավունքների պաշտպանության գործում: Հանդիսանալով իրավական պետության արդարադատության համակարգի անփոխարինելի բաղադրիչ՝ փաստաբանական ինստիտուտին վերաբերող առանձին իրավական կարգավորումներ սահմանվել են նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ:

Մեր ինստիտուտի առջև ծառացող մարտահրավերներն այսօր էլ քիչ չեն և դրանք անհրաժեշտ է հաղթահարել: Շոշափելի ձեռքբերումների հետ մեկտեղ ունենք նաև խնդիրներ, որոնք մեր միասնական ջանքերով պետք է լուծվեն:

Առաջադրվելով որպես ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թեկնածու՝ նպատակ ունեմ պահպանել ինստիտուտի նախորդ ժամանակահատվածի ձեռքբերումները և ձեզ հետ միասին զարգացնել այն:

Փաստաբան Սիմոն Բաբայան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանների պալատի ձեռքբերումները 6

Փաստաբանների պալատի գործունեության հիմնական խնդիրները 17

2021 – 2025 թվականների նախընտրական ծրագրի հիմնական ուղղությունները 19

Փաստաբանների պալատի ինստիտուցիոնալ միասնականության պահպանման անհրաժեշտություն 19

Փաստաբանական գործունեությանն արտաքին միջամտությունների (այդ թվում գաղտնալսման) վերացմանն ուղղված միջոցառումների շարունակականության իրականացման անհրաժեշտություն 21

Փաստաբանական համայնքի կողմից իրավակիրառ մարմինների՝ այդ թվում դատավորների, միջազգային չափորոշիչների վրա հիմնված, ոչ ֆորմալ, գնահատման համակարգի ստեղծման անհրաժեշտություն 22

Հասարակության մեջ փաստաբանի դերի և հեղինակության բարձրացմանն ուղղված միջոցառումների շարունակականության ապահովում..... 23

Փաստաբանական ռեսուրսների օպտիմալ օգտագործման և փաստաբանների զբաղվածությունը խթանող միջոցառումների ընդլայնման անհրաժեշտություն 23

Հանրային պաշտպանի գրասենյակի ինստիտուցիոնալ զարգացում 24

Մասնագիտական անվճար աջակցության ծրագրի (low bono) ներդրման անհրաժեշտություն 25

Անվճար իրավաբանական օգնություն (pro bono) և մասնագիտական անվճար աջակցություն (low bono) տրամադրող փաստաբանների և փաստաբանական գրասենյակների համար խրախուսման ընթացակարգի սահմանման անհրաժեշտություն . 26

Փաստաբանների միջև ոչ ֆորմալ շփումներին նպաստող մարզամշակույթային, ինտելեկտուալ միջոցառումների քանակի ավելացում 26

Փաստաբանական գրասենյակների զարգացումը խթանող ծրագրերի շարունակականության ապահովման անհրաժեշտություն 27

Փաստաբանների աշխատանքում ժամանակակից տեխնոլոգիաների և գործիքակազմերի կիրառմանը նպաստող միջոցառումների շարունակականության ապահովման անհրաժեշտություն 27

ՈՒսուցում և փաստաբանների վերապատրաստում..... 27

Տարեց փաստաբանների համար իրականացվող ծրագրերի շարունակականության ապահովում 28

Փաստաբանական համայնքի և իրավակիրառ ոլորտների ներկայացուցիչների փոխադարձ քննարկման հարթակների ընդլայնման անհրաժեշտություն..... 29

Փաստաբանների պալատի գիտագործնական կարողությունների զարգացում 29

Փաստաբանության ինստիտուտին վերաբերող ՄԻԵԴ որոշումների և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների շտեմարանի կազմում և հրապարակում..... 30

Միջհամայնքային կապերի զարգացմանն ուղղված միջոցառումների շարունակականության ապահովման անհրաժեշտություն 30

Այլ երկրներում և մասնավորապես ԵԱՏՄ տարածքում փաստաբանի կարգավիճակի փոխճանաչմանն ուղղված գործընթացի նախաձեռնում..... 31

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Հարգելի գործընկեր՝

2009-2021թթ ընկած ժամանակահատվածում հանդիսացել եմ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ և առ այսօր ղեկավարում եմ Փաստաբանական դպրոցը:

Այս ժամանակահատվածում պատիվ եմ ունեցել անմիջական մասնակցություն ունենալ Պալատում ընթացող գրեթե բոլոր գործընթացներին:

Ստորև ներկայացնում եմ նշված ժամանակաշրջանում արձանագրված ձեռքբերումները.

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության մեղմման և հանրային պաշտպանության ինստիտուտի զարգացման նպատակով իրականացվել են հետևյալ գործողությունները.

- Հանրային պաշտպանների թվաքանակի ավելացման քաղաքականության վարում.
- Հանրային պաշտպանի հաստիքների վարչատարածքային տեղաբաշխում.
- ՀՊԳ պաշտպան դառնալու ընթացակարգի թափանցիկության բարձրացում և մրցակցության եղանակների կատարելագործում.
- Հանրային պաշտպանների մասնագիտացումն ապահովելուն ուղղված միջոցառումների մշակում և իրականացում.
- Հանրային պաշտպանների խրախուսման եղանակների և ռոտացիոն համակարգի ներդնում՝ հաստիքների որոշակի տոկոսը սկսնակ փաստաբաններով համալրելու նպատակով.
- Հանրային պաշտպանների կողմից կատարված ծախսերի փոխհատուցման համակարգի շարունակական կիրառում.
- Անվճար իրավական օգնության տրամադրման ծառայության որակի բարձրացում և ընթացակարգերի նկատմամբ վերահսկողության կառուցակարգերի մշակում և ներդրում.
- ՀՊԳ գործունեության լայն լուսաբանում.

- Անվճար իրավական օգնության տրամադրման այլընտրանքային համակարգերի ներդրում, pro bono մշակույթի զարգացում.
- ՀՊԳ աշխատանքների իրականացման թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆ» ՀԱՄԱԿԱՐԳ

2016 թվականից սկսած ամբողջ ծավալով գործարկվում է «Էլեկտրոնային հանրային պաշտպան» էլեկտրոնային ծրագիրը: ծրագրի մշակումն ու ներդնումն իրականացվել է Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության (ABA ROLI) և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ:

«Էլեկտրոնային հանրային պաշտպան» ծրագրի նպատակն է կենտրոնացնել և առավելագույնս արդյունավետ դարձնել ՀՊԳ գործունեությունը: Ծրագիրը հնարավորություն է տալիս բարձրացնել հանրային պաշտպանի գրասենյակի կողմից տրամադրվող անվճար իրավաբանական օգնության որակը, հաշվառել ՀՀ ամբողջ տարածքում անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ դիմումները և որոշումները, ինչպես նաև այն հնարավորություն է տալիս իրականացնել էլեկտրոնային մոնիթորինգ և վերահսկողություն մարզերի հանրային պաշտպանների կողմից գործերի վարման ժամկետների և արձանագրված արդյունքների վերաբերյալ:

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ. ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փաստաբանական դպրոցում ուսուցումն իրականացվում է ըստ մասնագիտական ուղղվածության.

2014 թվականի աշնանային հոսքի ընդունելությունից սկսած Փաստաբանական դպրոցում ուսուցումը կազմակերպվում է ըստ ***քրեաիրավական*** և ***քաղաքացիաիրավական մասնագիտական ուղղվածությունների***, ինչի արդյունքում համապատասխան մասնագիտացում ընտրած ունկնդիրները ուսումնական պլանով նախատեսված առարկաներից մոտ 90% հարաբերակցությամբ անցնում են նեղ մասնագիտական առարկաներ, օրինակ՝ քրեական ուղղվածության ունկնդիրները քրեաիրավական մասնագիտացման առարկաներ, իսկ մնացած առարկաները հարակից

են և կրում են ընդհանուր բնույթ՝ անկախ ունկնդրի մասնագիտացումից, օրինակ՝ փաստաբանի վարքագծի, հոգեբանության հիմունքների, սահմանադրական դատարան ներկայացվող դիմումների հետ կապված առարկաները:

* * *

Փաստաբանական դպրոցի ունկնդիրների որակավորման քննությունները.

Փաստաբանական դպրոցի ունկնդիրների (շրջանավարտների) որակավորման քննություններն անցկացնում է Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը:

Գործող կարգի համաձայն՝ Փաստաբանական դպրոցի ունկնդիրն ավարտելով ուսուցումը դպրոցում, որակավորման քննությանը մասնակցելու նպատակով Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան որակավորման հանձնաժողովին է ներկայացնում սահմանված ձևի լրացրած և ստորագրած դիմումը:

Փաստաբանի հավակնորդների երդման հանդիսավոր արարողությունը.

«Փաստաբանության մասին» օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ առաջին անգամ փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալիս, փաստաբանը Փաստաբանների պալատի խորհրդի առջև հանդիսավոր պայմաններում երդում է տալիս:

Արդեն ձևավորված ավանդույթի համաձայն Փաստաբանական դպրոցի շրջանավարտներն արտոնագրեր են ստանում հանդիսավոր պայմաններում՝ Փաստաբանների պալատի տարբերանշանով պատմուճաններով և գլխարկներով:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Փաստաբանների պալատը՝ հիմք ընդունելով փաստաբանների կարիքների և կազմակերպված վերապատրաստումների արդյունավետության գնահատումը, շարունակաբար արդիականացնում և զարգացնում է փաստաբանների վերապատրաստման համակարգը: Փաստաբանների վերապատրաստման նոր կարգով, մի շարք բարեփոխումներ են կատարվել վերապատրաստման գործընթացում:

Ներկայումս գործում է փաստաբանների վերապատրաստման երեք հարթակ՝ վերապատրաստման դասընթացներ տեղում՝ Փաստաբանների պալատում կամ Փաստաբանական դպրոցում, հեռավար և առցանց (online) վերապատրաստում:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

Փաստաբանների պալատը հավասարապես կարևորում է միջազգային և տեղական համագործակցության ընդլայնումը: Միջազգային համագործակցության շրջանակներում բազմաթիվ հանդիպումներ են տեղի ունենում այլ պետությունների փաստաբանական համայնքի ներկայացուցիչների, դատական կատարողների, սնանկության կառավարիչների, արդարադատության ոլորտի տարբեր մասնագետների հետ: 2009-2021 թթ ընկած ժամանակահատվածում տարբեր ձևաչափերով հանդիպումներ են տեղի ունեցել Գերմանիայի Փաստաբանների Դաշնային պալատի, Իրանի Իսլամական Հանրապետության փաստաբանների պալատի, Ֆրանկոֆոն երիտասարդ փաստաբանների, Մոնպելիեյի փաստաբանների միության, Փարիզի փաստաբանների

պալատի, Վրաստանի փաստաբանների պալատի, ԱՊՀ երկրների փաստաբանների միությունների հետ: Համաժողովներից պետք է առանձնացնել «Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների փաստաբանական միությունների և իրավաբանական համայնքների ընթացիկ մարտահրավերները և համագործակցության հնարավորությունները» խորագրով համաժողովը, որը ՀՀ-ում իրականացվող առաջին նման միջոցառումն էր և մասնակցում էին Մոլդովայի, Բելառուսի, Ուկրաինայի, Ռուսաստանի, Վրաստանի, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, Չեխիայի, Լեհաստանի ներկայացուցիչները: Համաժողովը կազմակերպվել էր ՀՀ փաստաբանների պալատի, Եվրոպայի խորհրդի, Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավաբանական համայնքների խորհրդի (CCBE) կողմից՝ Եվրոպայի խորհրդի «Աջակցություն Հայաստանում դատական բարեփոխումների իրականացմանը» ծրագրի շրջանակներում: Համաժողովի ընթացքում ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր է ՀՀ փաստաբանական դպրոցի և Իռլանդիայի իրավաբանների համայնքի միջև:

Միջազգային հանդիպումներից իր մասշտաբայնությամբ կարելի է առանձնացնել նաև **ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի թմրադեղերի դեմ միջազգային պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի** ծրագրի շրջանակներում, **Միացյալ Թագավորության Նոթինգեմի իրավաբանության դպրոցի և** Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի հետ համատեղ անցկացված ***«Փաստական տեղեկություններ. իրավունքի գերակայության, մարդու իրավունքների***, կոռուպցիայի, արդարադատության մատչելիության մարտահրավերները» խորագրով հանդիպում-քննարկումը:

Միջազգային համագործակցությունից զատ, Փաստաբանների պալատը կարևորում է ներպետական համագործակցությունը: Այս շրջանակներում փոխըմբռնման հուշագրեր են ստորագրվել ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի, Կոտայքի (2018), Շիրակի (2018), Լոռու, Արարատի (2019) մարզպետարանների հետ:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Փաստաբանների պալատի մարզային քաղաքականության իրականացման կարևոր բաղադրիչներից է Հայաստանի Հանրապետության մարզերում մարզային համակարգողների և մարզի քաղաքների պատասխանատուների ինստիտուտի զարգացումը:

Կարևորելով մարզերում գործունեություն իրականացնող փաստաբանների վերապատրաստման հարցը, Փաստաբանների պալատը մարզային փաստաբանների համար կազմակերպում է վերապատրաստման հեռավար դասընթացներ, ինչպես նաև վերապատրաստման դասընթացներ է կազմակերպում տեղում՝ դասընթացավար գործուղելու միջոցով: Փաստաբանների պալատը մարզերում գործունեություն իրականացնող փաստաբաններին պարբերաբար տրամադրում է մասնագիտական գրականություն:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Փաստաբանների պալատը՝ կարևորելով Փաստաբանների պալատի անդամ փաստաբանների, ինչպես նաև ՀՀ-ում գործունեություն ծավալող այլ պետության փաստաբանների իրավունքների պաշտպանությունն ապահովելը, ինչպես նաև այդ իրավունքների արդյունավետ իրացման համար անհրաժեշտ միջավայր ստեղծելը, դեռևս 2014 թվականին ստեղծել է փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողով, որի նպատակն է միջոցներ ձեռնարկել փաստաբանների իրավունքներն ու մասնագիտական գործունեությունը բոլոր տեսակի սպառնալիքներից, կամ ցանկացած տեսակի հակահիրավական միջամտությունից (ոտնձգությունից) պաշտպանելու համար:

Փաստաբանների պալատում բացի վերոնշյալ հանձնաժողովից, գործում է նաև արագ արձագանքման հանձնախումբ, որն արձանագրում է փաստաբանի մասնագիտական գործունեության ընթացքում փաստաբանի լիազորությունների իրականացման խոչընդոտման դեպքերը կամ փաստաբանի նկատմամբ այլ անօրինական գործողությունները, ինչպես նաև նպաստում է փաստաբանների

մասնագիտական գործունեության ընթացքում փաստաբանների լիազորությունների իրականացման խոչընդոտները վերացնելուն:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փաստաբանների պալատը տարիներ ի վեր նախաձեռնել է և իրականացնում է մեծաթիվ սոցիալական ծրագրեր՝ ինչպես օրինակ «Փաստաբան Եզեգելյան օժանդակություն» ծրագիրը, որի շրջանակներում փաստաբաններին հանձնվում է անդամավճարի վճարման վերաբերյալ հավաստագրեր կամ կին փաստաբանների համար անդամավճարի արտոնությունների սահմանումը:

Փաստաբանների պալատն իրականացնում է երիտասարդ փաստաբաններին օժանդակության նախաձեռնություն, որը նպաստում է ոչ միայն սկսնակ փաստաբանների՝ համայնքում ինտեգրմանը, մասնագիտության մեջ կայացմանը, փորձ և վստահորդներ ձեռք բերելուն, այլ նաև pro bono մշակույթի զարգացմանը:

Փաստաբանների պալատում 2017 թվականի հունիսի 7-ին բացվել է 20 երիտասարդ փաստաբանի համար նախատեսված աշխատասենյակ, որը հագեցած է համակարգիչներով, այլ անհրաժեշտ տեխնիկայով և նախատեսված է Փաստաբանական դպրոցը նոր ավարտած և աշխատասենյակն օգտագործելու իրավունք ստացած փաստաբանների համար, որոնք առանձին փաստաբանական գրասենյակ չունենալու պարագայում աշխատասենյակից իրենց անձնական գործերն են վարում, ինչպես նաև իրենց գործերին զուգահեռ որոշակի քանակի գործեր (այդ թվում՝ ՀՊԳ շահառուների գործեր) վարում են անվճար:

ՀՀ փաստաբանների պալատում, ձևավորված ավանդույթի համաձայն, ամեն տարի տոնում են Հաղթանակի և խաղաղության տոնը, Երեխաների պաշտպանության միջազգային օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ 101 ԱՄՅԱԿ

2019 թվականի դեկտեմբերի 6-ին առաջին անգամ մեծ հանդիսավորությամբ նշվեց «Փաստաբանի օրը» և փաստաբանության 101 ամյակը: Կազմակերպված միջոցառմանը մասնակցում էին բազմաթիվ փաստաբաններ և հյուրեր՝ Հայաստանյայց Առաքելական

Սուրբ Եկեղեցուց, քննչական մարմիններից, դատական, գործադիր և օրենսդիր իշխանություններից:

ARMLEGAL EXPO ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

ՀՀ փաստաբանների պալատը կազմակերպեց «Իրավունքը՝ զարգացման գրավական» կարգախոսով, փաստաբանական գրասենյակների ցուցահանդեսը, որին մասնակցություն ունեցան ավելի քան երեք տասնյակ մեծ ու փոքր փաստաբանական գրասենյակներ, Արցախի Հանրապետության փաստաբանների պալատը և հանրային

իրավական ծառայություններ մատուցող այնպիսի կառույցներ: ARMLEGAL EXPO-ի շրջանակներում կազմակերպվել են նաև տարբեր մասնագիտական թեմաներով կոնֆերանսներ, ինչպես նաև լրագրողների և լուսանկարիչների՝ իրավական խորագիր ունեցող լուսանկարների մրցույթ-ցուցահանդես:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Պալատ) գործունեության ընթացքում վեր են հանվել հետևյալ խնդիրները՝

- Պետության ձգտումը՝ վերահսկելու փաստաբանների մասնագիտական գործունեությունը, այդ թվում՝ Փաստաբանների պալատի միասնականությունը խաթարելու, Փաստաբանական դպրոցի և Հանրային պաշտպանի գրասենյակի նկատմամբ վերահսկողությունն ուժեղացնելու միջոցով.
- Փաստաբանական գործունեությանն արտաքին միջամտություններ (այդ թվում գաղտնալսում).
- Փաստաբանական համայնքի կողմից իրավակիրառ մարմինների՝ այդ թվում դատավորների, միջազգային չափորոշիչների վրա հիմնված, ոչ ֆորմալ, գնահատման համակարգի ստեղծման անհրաժեշտություն.
- Հասարակության մեջ փաստաբանի դերի և հեղինակության ընկալման նվազ մակարդակ.
- Փաստաբանական ռեսուրսների օգտագործման նվազ արդյունավետություն և զբաղվածության խթանման կատարելագործման ենթակա գործիքակազմ.
- Փաստաբանական ռեսուրսների տարածքային ապակենտրոնացման միջոցառումների կատարելագործման ենթակա գործիքակազմ.
- Մարզաբնակ փաստաբանների նվազ ներգրավվածություն ՀՀ փաստաբանների պալատի առօրյա գործընթացներին.
- Հանրային պաշտպանի գրասենյակի գերծանրաբեռնվածություն.
- Դատախազների համեմատությամբ հանրային պաշտպանների սոցիալական ապահովվածության անհավասարություն.
- Մասնագիտական անվճար աջակցության ծրագրի (Low Bono) բացակայություն.
- Վերապատրաստման ծրագրերում ընդգծված գործնական այդ թվում ոչ մասնագիտական դասընթացների ոչ բավարար քանակ.

- Անվճար իրավաբանական օգնություն (Pro bono) և մասնագիտական անվճար աջակցության տրամադրող փաստաբանների և փաստաբանական գրասենյակների խրախուսման ընթացակարգի բացակայություն.
- Փաստաբանների միջև ոչ ֆորմալ շփումներին նպաստող մարզամշակութային, ինտելեկտուալ միջոցառումների նվազ քանակ.
- Փաստաբանական գրասենյակների զարգացմանը խթանող ծրագրերի շարունակականություն.
- Փաստաբանների աշխատանքում ժամանակակից տեխնոլոգիաների և գործիքակազմերի կիրառմանը նպաստող միջոցառումների շարունակականություն.
- Տարեց փաստաբանների համար իրականացվող ծրագրերի շարունակականություն.
- Փաստաբանական համայնքի և իրավակիրառ ոլորտների ներկայացուցիչների փոխադարձ քննարկման հարթակների սակավություն.
- Փաստաբանների պալատի գիտագործնական կարողությունների ընդլայնման անհրաժեշտություն.
- Փաստաբանության ինստիտուտին վերաբերող ՄԻԵԴ որոշումների և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների շտեմարանի ստեղծման անհրաժեշտություն.
- Միջհամայնքային կապերի զարգացմանը ուղղված միջոցառումների շարունակականության ապահովման անհրաժեշտություն.
- Այլ երկրներում և մասնավորապես ԵԱՏՄ տարածքում փաստաբանի կարգավիճակի փոխադարձ ճանաչմանն ուղղված գործընթացի նախաձեռնման անհրաժեշտություն:

2021 – 2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն նախընտրական ծրագրով ներկայացվում են փաստաբանության առջև ծագած խնդիրների լուծման ուղիները և տեսլականը:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Պալատի գործունեության ընթացքում, վերջին շրջանում ավելի հաճախ, այդ թվում մեր գործընկերների կողմից շրջանառվում են կարծիքներ, որ օրենսդրական փոփոխությունների միջոցով անհրաժեշտ է մասնատել փաստաբանության ինստիտուտը և մի քանի փաստաբանական պալատներ հիմնադրելու և դրանց անդամակցելու հնարավորություն ընձեռնել փաստաբաններին:

Այս գաղափարը կործանարար է մեր ինստիտուտի համար, դրա նպատակահարմարությունը փաստարկված չէ, որևէ կերպ չի կարող արդարացված լինել և հղի է ստորև նշված հետևանքներով՝

- **Կազմաքանդվելու է փաստաբանական ինստիտուտը:** *Փաստաբանի անկախությունն ապահովող կառույցները՝ Փաստաբանական դպրոցը, Հանրային պաշտպանի գրասենյակը և այլ ստորաբաժանումները կամ կդադարեն գործել, կամ կգործեն պետական մարմինների ենթակայության ներքո:*
- **Առաջանալու է հակասություն միջազգային առաջատար փորձի հետ:** *Ժամանակակից փաստաբանական համայնքները գնում եմ միավորման ճանապարհով, իսկ բազմապալատ բաժանումը բնորոշ է մեծ փաստաբանական համայնք ունեցող երկրներին, որտեղ պալատների բաժանումը իրականացվում է բացառապես տարածքային սկզբունքով՝ ԱՄՆ, Ֆրանսիա Գերմանիա: Անգամ ԱՊՀ տարածում գործում է միապալատ ձևաչափը:*
- **Նվազելու են փաստաբանական ինստիտուտի արդյունավետ կառավարման ռեսուրսային հնարավորությունները:**
  Ստեղծված յուրաքանչյուր պալատ պետք է ինքնուրույն կազմակերպի իր աշխատանքները և հոգա իր ֆինանսական ծախսերը՝ շենքի վարձակալություն, աշխատողների աշխատավարձ իրականացվող ծրագրեր և այլ: Առկա վիճակում

ռեսուրսների միավորման շնորհիվ է իրականացվում Պալատի առջև դրված խնդիրների իրականացումը:

- **Ինստիտուցիոնալ միասնականության բացակայության հետևանքով նվազելու է ՀՀ փաստաբանության հեղինակությունը և տարիների ընթացքում վաստակած կարգավիճակը միջազգային համագործակցության հարթակներում:**

  Փաստաբանների պալատը համագործակցում է տարբեր միջազգային կառույցների հետ, ինչպես գործընկեր պալատների, այնպես էլ համաեվրոպական և ԱՊՀ տարածքի կառույցների հետ: Տարբեր ձևաչափերում ՀՀ փաստաբանների պալատը վաստակել է իր ուրույն տեղը և դիրքը: Միջազգային գործընկերները հաշվի են նստում մեր կառույցի արտահայտած դիրքորոշումների հետ, հրավիրում են բազմաթիվ միջազգային միջոցառումների, ՀՀ փաստաբանների պալատին ներգրավում են բազմաթիվ միջազգային ծրագրերին, որպիսի գործելաոճն ակնհայտ կդադարի փաստաբանության ինստիտուտի մասնատման դեպքում:

- **ՀՀ Փաստաբանական ինստիտուտը հայտնվելու է քաղաքական (իշխանական և ընդդիմադիր), օլիգարխիկ ազդեցությունների ներքո, ինչն ուղղակի կհարվածի դրա անկախությանը:**

  Բազմապալատ ձևավաչափի դեպքում ֆինանսական ռեսուրսակիր անձինք, այդ թվում նաև քաղաքական միավորումների ներկայացուցիչները, հնարավորություն կունենան ձևավորելու իրենց անձնական փաստաբանական պալատները՝ միջամտելով փաստաբանի անկախությանը՝ ինստիտուցիոնալ մակարդակում:

  - *Չեն լինելու փաստաբանի վարքագծի ընդհանուր կանոններ, որոնք նույնը կլինեն բոլոր փաստաբանների համար և կանխատեսելի հանրության համար, իսկ լինելու դեպքում դրանք հաստատվելու են ոչ թե փաստաբանական համայնքի, այլ ՀՀ արդարադատության նախարարության կողմից՝ դրանից բխող հետևանքներով:*
  - *Ժամանակի ընթացքում փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը մեծ հավանականությամբ վերապահվելու է պետական մասնակցությամբ մարմնի,*
  - *Փաստաբանության ինստիտուտի մասնատմանը հաջորդելու է փաստաբանների անկախության երաշխիքների նվազեցումը, փաստաբանի հեղինակության նսեմացումը, ինչն էլ ի վերջո անդրադառնալու է թե՛ իրավական օգնության տրամադրման որակի անկմանը, թե՛ փաստաբանների հոնորարների*

նվազմանը, քանի որ չի լինելու այդ երաշխիքների համար պայքարող մեկ միասնական կառույց:

- *Փաստաբանական դպրոցը կամ առհասարակ չի գործելու, կամ միացվելու է ՀՀ արդարադատության ակադեմիային, իսկ փաստաբանների արտոնագրերի տրամադրումը կվերապահվի պետական մասնակցությամբ մարմնի:*
- *Մեկից ավելի պալատների դեպքում չի կարող գործել նաև հանրային պաշտպանի գրասենյակը, իսկ անվճար օգնության տրամադրումը կազմակերպվելու է պետական մասնակցությամբ մարմնի կողմից:*

Այս մոտեցումը ուղղակի հարված է փաստաբանի կարգավիճակի անկախությանը: Նշված կառույցները ստեղծվել են առաջավոր միջազգային փորձի հիման վրա և այսօր դրանց արդյունավետության բարձր գնահատականները արձանագրվել են միջազգային հեղինակավոր կառույցների կողմից: Ավելին հայաստանյան փորձը դիտարկվում է որպես օրինակելի և իր կիրառությունն է գտնում տարբեր երկրներում:

Ամփոփելով վերոգրյալը պետք է փաստել, որ փաստաբանության մասնատումը մեր ինստիտուտը վերածելու է պետական մարմիններին կից միավորման, ինչը անթույլատրելի է և հետընթաց, որի իրական շահառուն միայն անկախ փաստաբանական ինստիտուտի դեմ պայքարող անձը կարող է լինել:

Փաստաբանների պալատի ինստիտուցոնալ միասնականության պահպանման համար անհրաժեշտ է ձևավորել իրավունքի գերակայության վրա հիմնված գործիքակազմ, խնդրի չեզոքացմանը ներգրավվելով փաստաբաններից յուրաքանչյուրին, ինչպես նաև շահագրգիռ բոլոր մարմիններին և միջազգային կառույցներին:

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ ԳԱՂՏՆԱԼՍՄԱՆ) ՎԵՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանական գործունեությանը միջամտելու փորձերի շարունակականությունը վկայում է այն մասին, որ փաստաբանների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը առկա է:

Անհրաժեշտ է իրականացնել փաստաբանների իրավունքների իրացման խոչընդոտների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում: Պետք է պարբերաբար լուսաբանել փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի և արագ արձագանքման հանձնախմբի կատարած աշխատանքը, ակումբի նիստերում քննարկել արձանագրված խախտումները:

Միաժամանակ անհրաժեշտ է պետական մարմինների կողմից փաստաբանների մասնագիտական գործունեությունը վերահսկելու կամ միջամտելու ցանկացած փորձ արձանագրել և կիրառել համարժեք պաշտպանության միջոցներ՝ այդ թվում նախաձեռնել ռազմավարական դատավարություններ, նախապատրաստել օրենքների նախագծեր և բարձրաձայնել արձանագրված դեպքերը՝ ներգրավվելով զանգվածային լրատվամիջոցներին:

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ, ՈՉ ՖՈՐՄԱԼ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանական գործունեություն իրականացնելիս իրավունքների պաշտպանության շրջանակներում փաստաբաններն առնչվում են տարբեր իրավակիրառ մարմինների, այդ թվում դատական համակարգում դրական և բացասական երևույթներին: Նշվածով պայմանավորված, ձևավորվում է նաև հասարակական կարծիքը այդ մարմինների աշխատանքի արդյունավետության վերաբերյալ: Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2014թ.թիվ 17 կարծիքում նշվել է, որ գնահատումն առանցքային նշանակություն ունի արդարադատության որակի բարձրացման համատեքստում: Փաստաբանական պալատի կողմից դատարանների գնահատման պրակտիկան լայնորեն կիրառություն է գտել նաև ԱՄՆ-ում:

Վերոգրյալը նկատի ունենալով ակնառու է, համապատասխան չափորոշիչների գործածմամբ, ոչ ֆորմալ գնահատում ի զորու է իրականացնել նաև ՀՀ փաստաբանական համայնքը, ինչը կնպաստի իրավունքի գերակայության ամրապնդմանը և արդարադատության որակի բարձրացմանը:

Վերոգրյալով պայմանավորված, անհրաժեշտ է ստեղծել իրավակիրառ մարմինների, այդ թվում դատավորների, միջազգային չափորոշիչների վրա հիմնված, ոչ ֆորմալ, գնահատման համակարգ:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓԱՍՏԱԲԱՆԻ ԴԵՐԻ ԵՎ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Փաստաբանների պալատը բազմաթիվ նախաձեռնություններ և միջոցառումներ է իրականացրել, որոնք նպաստել են հասարակության մեջ փաստաբանի դերի և հեղինակության բարձրացմանը:

Համավարակով և երկրում ստեղծված պատերազմական իրավիճակով պայմանավորված միջոցառումների պարբերականությունը նվազել է, որպիսի պայմաններում անհրաժեշտ է վերականգնել առնվազն նախկին պարբերականությունը՝ այն զարգացնելու միտումով:

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԽԹԱՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ փաստաբանների պալատը փաստաբանների աջակցության ծրագրերի շրջանակներում արդեն իսկ իրականացնում է զբաղվածության ապահովման աջակցության մի շարք ծրագրեր (20 երիտասարդ փաստաբանի համար վեց ամիս ժամկետով աշխատասենյակի առանձնացում ՀՀ փաստաբանների պալատի շենքում), սակայն փաստաբանական ծառայությունների մատուցման շուկայի ուսումնասիրությունները վկայում են, որ առկա է փաստաբանների զբաղվածությանն աջակցելու անհրաժեշտություն՝ հատկապես երիտասարդ փաստաբանների շրջանում:

Նախատեսվում է ստեղծել փաստաբանական ծառայությունների պահանջարկ ունեցող տնտեսվարողների էլեկտրոնային հարթակ, ինչպես նաև փաստաբանի աշխատուժի պահանջարկ ունեցող փաստաբանական գրասենյակների հարթակ, որի միջոցով հնարավոր կլինի ապահովել կապը աշխատանք փնտրող փաստաբանների և փաստաբանական գրասենյակների, ինչպես նաև փաստաբանների և տնտեսվարող սուբյեկտների միջև:

Այս հարթակի արդյունավետ գործարկումը կնպաստի նաև մարզաբնակ փաստաբանների զբաղվածության ապահովմանը, ինչպես նաև փաստաբանական ծառայությունների շուկայի տարածքային ապակենտրոնացմանը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Այսօր Հանրային պաշտպանի գրասենյակի առաջնահերթ խնդիրը հանրային պաշտպանների գերծանրաբեռնվածություն է:

Այս խնդրի լուծման ճանապարհներից է հանրային պաշտպանների հաստիքների ավելացումը և ծանրաբեռնվածության բաշխման օպտիմալացումը: Որպես լուծում առաջարկվում է գործադիր իշխանության մարմինների հետ շարունակել բանակցությունները հաստիքների ավելացման ուղղությամբ, իսկ օպտիմալացման տեսանկյունից օգտագործել Փաստաբանական դպրոցի կլինիկայի կարողությունները: Արդյունավետ համագործակցության շրջանակներում հնարավոր է իրավաբանական օգնության գործընթացում օգտագործել նաև Փաստաբանական դպրոցի կարողությունները, որոնք այս ոլորտում շոշափելի են:

Հատուկ ուշադրության է արժանի հանրային պաշտպանների սոցիալական ապահովվածության անհավասարությունը դատախազների համեմատությամբ: Ակնհայտ է, որ օրենքով ամրագրված սոցիալական հավասարության ստանդարտը գործնականում չի կիրառվում: Տվյալ դեպքում առաջարկվում է գործադիր իշխանության մարմինների հետ շարունակել բանակցությունները դատախազների և հանրային պաշտպանների սոցիալական հավասարության ապահովման ուղղությամբ: Խնդիրը կարող է լուծվել ինչպես պետական բյուջեի միջոցների հաշվին, այնպես էլ որպես փաստաբանական ծախս հատուցված միջոցների հաշվին:

Հանրային պաշտպանի գրասենյակը կարևորագույն դերակատարում ունի անվճար (pro bono) իրավաբանական ծառայությունների ոլորտում, ինչն ամրագրվել է նաև Սահմանադրությամբ: Պետք է նկատի ունենալ, որ բյուջետային միջոցների հաշվին ձևավորվող գրասենյակի կարողությունները բավարար չեն անվճար իրավաբանական ծառայությունների առկա ծավալը ամբողջապես ապահովելու համար: Միաժամանակ նմանատիպ ծառայություններ են մատուցում բազմաթիվ այլ կառույցներ՝ այդ թվում փաստաբանական գրասենյակներ: Ուստի այս առումով անհրաժեշտ է Հանրային պաշտպանի գրասենյակը դիտարկել ոչ միայն որպես օգնություն տրամադրող, այլ որպես

նշված ոլորտը համակարգող կառույց: Նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ստեղծել էլեկտրոնային հարթակ, որտեղ կգեներացվեն անվճար իրավաբանական օգնության կարիքները և համապատասխանաբար կբաշխվեն նմանատիպ աջակցություն ցուցաբերելու պատրաստակամություն ունեցող կառույցների և անձանց միջև:

Հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության մասով հաջորդ արձանագրվող խնդիրն ավելի արդյունավետ և պակաս արդյունավետ հանրային պաշտպանների միջև տարբերակված մոտեցում դրսևորելու օրենսդրական արգելքներն են: Չնայած հանրային պաշտպանները հանդիսանում են ՀՀ փաստաբանների պալատի աշխատակիցները, սակայն նրանց նկատմամբ կիրառելի չէ օրինակ դրամական պարգևատրում կամ լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում խրախուսանքի միջոցները, քանի որ նրանց աշխատանքը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեով: Ակնհայտ է, որ արդյունավետ աշխատանքի խրախուսումը այն գործուն միջոցներից է, որը շահագրգռում է բոլոր աշխատողներին ավելի ջանասիրաբար աշխատելու հարցում: Ուստի նախատեսվում է ներդնել հանրային պաշտպանների խրախուսման համակարգ, իսկ առկա օրենսդրական խոչընդոտների մասով ներկայացնել օրենսդրական փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկներ:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՎՃԱՐ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ (LOW BONO) ՆԵՐԴՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից իրավունքի զարգացման միտումները վկայում են, որ մասնագիտական աջակցության կարիք են ունենում նաև փաստաբանները: Առավել հաճախ նման կարիք առաջանում է երիտասարդ և տարեց փաստաբանների մոտ: Որպես խնդրի լուծում կարող է հանդիսանալ մասնագիտական անվճար աջակցության ծրագրի իրականացումը, որը համահունչ է Փաստաբանների պալատի առաքելությանը: Նմանատիպ փորձ կիրառվում է տարբեր երկրների փաստաբանական համայնքներում, իսկ առավել տարածված է ԱՄՆ-ում: Ծրագրի շրջանակներում ակնկալվում է ստեղծել LOW BONO հարթակ և ներգրավել աջակցության կարիք և նման օգնություն տրամադրելու պատրաստակամություն ունեցող գործընկերներին: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նմանատիպ աջակցություն շատերս ենք ցուցաբերել և շարունակում ենք ցուցաբերել, հետևաբար այն կարելի է իրականացնել համակարգված ձևաչափով:

Թեև այս ծրագիրը որևէ կերպ չի զուգակցվում փաստաբանների վերապատրաստման դասընթացների հետ, այն առավելապես վերաբերում է դեպքերին, երբ փաստաբաններն իրենց վարած գործերով ունեն փորձի փոխանակման կամ նման գործեր վարած ավելի փորձառու փաստաբանների հետ խորհրդակցելու կարիք և այս հարթակն առավելապես ունենալու է վերը նշված առաքելությունը:

ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ (PRO BONO) ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՎՃԱՐ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ (LOW BONO) ՏՐԱՄԱԴՐՈՂ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Անվճար իրավաբանական օգնության տրամադրումը յուրաքանչյուրիս առօրյայի մասն է կազմում: Մյուս կողմից նման աջակցության կարիք ունի մեր հասարակությունը: Հետևաբար անվճար իրավաբանական օգնության (pro bono) և մասնագիտական անվճար աջակցության (low bono) տրամադրումը պետք է խրախուսանքի արժանանա նաև մեր համայնքի կողմից: Ուստի այս առումով անհրաժեշտ է ստեղծել խրախուսման միջոցների կիրառման արդյունավետ ընթացակարգ՝ խրախուսելով մեր գործընկերներին հանրօգուտ աշխատանքի համար: Որպես խրախուսման միջոցներ կարող են ծառայել անդամավճարի գծով արտոնությունները, վերապատրաստումների գծով արտոնությունները և այլ գործիքակազմ:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՈՉ ՖՈՐՄԱԼ ՇՓՈՒՄՆԵՐԻՆ ՆՊԱՍՏՈՂ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ, ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ

Փաստաբանների պալատը բավարար հաճախականությամբ իրականացնում էր նման միջոցառումներ, սակայն համավարակով պայմանավորված դրանց քանակը վերջին տարիներին նվազեց, ինչը նվազեցնում է մեր գործընկերների միջև շփումները: Ուստի անհրաժեշտ է վերականգնել նախկին ավանդույթները, ավելի հաճախակի դարձնել դրանք և ընդլայնել դրանց շրջանակը:

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԽԹԱՆՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանական գրասենյակների զարգացումը խթանող ծրագրերի շարքում հատուկ ուշադրության է արժանի գրասենյակների EXPO ցուցահանդեսը, որը դրական արձագանքներ թողեց ինչպես մեր համայնքի ներսում, այնպես էլ հասարակության մոտ: Ուստի անհրաժեշտ է այս միջոցառման իրականացումը դարձնել շարունակական, միաժամանակ խրախուսել գործունեության իրականացման գրասենյակային մշակույթը: Բացի այդ, նախատեսվում է փաստաբանական գրասենյակների համար ձևավորել հաշվապահական հաշվառում իրականացնող որակյալ և մատչելի ծառայություններ մատուցող կազմակերպությունների բազա:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանների պալատը ձեռնամուխ է եղել այս խնդրի լուծման շրջանակներում իրականացնել ծրագրեր՝ մասնավորապես ստեղծել փաստաբանական գործունեության կառավարման էլեկտրոնային հարթակ, որի վերբաբերյալ աշխատանքները դեռ ընթանում են:

Անհրաժեշտ է շարունակել այդ ուղղությամբ տարվող աշխատանքները՝ հասնելով վերջնական արդյունքի և փաստաբաններին՝ անվճար հիմունքներով, տրամադրել փաստաբանական գործունեության էլեկտրոնային կառավարման ծրագիրը: Միաժամանակ նախատեսվում է հատուկ դասընթացներ կազմակերպել փաստաբանների համար, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով իրենց աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու վերաբերյալ:

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ուսուցման և փաստաբանների վերապատրաստման բաղադրիչի շրջանակներում կարող ենք արձանագրել, որ թե՛ Փաստաբանական դպրոցի, թե՛ ՀՀ փաստաբանների պալատի գործուն ջանքերի շնորհիվ մեր համայնքը առաջատար դիրքերում է և իր փորձը կիրառվում է շատ երկրներում, այդ թվում՝ զարգացած երկրներում:

Այդուհանդերձ, ուսումնական գործընթացը պետք է զարգանա համաժամանակյա ռեժիմով և պարբերաբար կատարելագործվի: Դպրոցի գործուսուցման փուլում կիրառվող գործնական դասընթացների արդյունավետությամբ պայմանավորված ակնառու է, որ նմանատիպ դասընթացների անհրաժեշտություն է առաջանում նաև գործող փաստաբանների վերապատրաստման շրջանակներում: Այլ մասնագիտացում սերտող փաստաբանների համար օգտակար կլինեն սիմուլացիոն դատավարությունները: Շարունակական կրթության քաղաքականութանն ամբողջապես համապատասխանում են ոչ մասնագիտական դասընթացների՝ հոգեբանություն, խոսքի մշակույթ, հաշվապահական հաշվառում և այլն գործածումը: Միաժամանակ առավել արդյունավետ են հատուկ մասնագիտացված կասկադային (դասախոսությունների խումբ) դասախոսությունները:

Նախատեսվում է ընդլայնել փաստաբանների վերապատրաստման թեմաների շրջանակը և ներդնել կարճ ուսումնական ծրագրերի միջոցով վերապատրաստումների մոդելը: Այն իրենից ենթադրում է մեկ թեմայի շուրջ 12 ակադեմիական ժամ վերապատրաստման կազմակերպում, որի շրջանակներում դասախոսը կսպառի թեմային վերաբերող բոլոր խնդրահարույց հարցերը: Այս ինստիտուտի ներմուծման արդյունքում փաստաբաններն ունենալու են ընտրության ազատություն վերապատրաստվել կամ կարճ՝ 12 ակադեմիական ժամ տևողությամբ ծրագրով, կամ այս պահին գործող ձևաչափով:

ՏԱՐԵՑ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Փաստաբանների պալատը նախորդ տարիներին պարբերաբար իրականացրել է սոցիալական ծրագրեր՝ թիրախավորելով կարիքավոր և աջակցության կարիք ունեցող փաստաբաններին: Պետք է արձանագրել, որ այդ ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը չի վերացել:

Վերոնշյալով պայմանավորված, նախատեսվում է հնարավորինս աջակցել կենսաթոշակային տարիքի փաստաբաններին՝ սահմանելով հավելյալ արտոնություններ անդամավճարների և վերապատրաստման դասընթացների մասով:

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Քննարկման հարթակների առկայության անհրաժեշտությունը պայմանավորված է տարբեր ոլորտում առկա խնդիրների լուծման արդյունավետ ուղիներ ձևավորելու, կարծիքների փոխանակում իրականացնելու, իրավունքի զարգացմանը նպաստելու հանգամանքներով: Դատական, գործադիր և օրենսդիր իշխանությունների հետ նմանատիպ կայուն հարթակների արդյունավետության փորձը ապացուցվել է բազմաթիվ անգամներ: 2012թ. նմանատիպ քննարկման արդյունքում ՀՀ ոստիկանության և Պալատի միջև կնքվել է փոխըմբռնման հուշագիր, որն արդյունավետ գործում է առ այսօր: «Աջակցություն Հայաստանում դատական բարեփոխումների իրականացմանը» ծրագրի շրջանակներում դատական համակարգի և ՀՀ փաստաբանների պալատի հետ համատեղ կազմակերպված հանդիպումներին քննարկվեցին բազում խնդիրներ, վեր հանվեցին ուղենիշային դիրքորոշումներ:

Նշվածը նկատի ունենալով, պետք է փաստել, որ նման հարթակների անհաշտությունն առկա է հետևաբար անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցներ դրանք ձևավորելու ուղղությամբ:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Նախատեսվում է նախաձեռնել փաստաբանների համար գիտագործնական ամսագրի թողարկում, որտեղ բոլոր փաստաբանները կկարողանան իրենց գիտական հոդվածները ներկայացնել հրատարակման՝ ՀՀ փաստաբանների պալատի սահմանած չափանիշների շրջանակներում:

Ի տարբերություն ԲՈԿ-ի կողմից հաստատված այլ գիտական ամսագրերի, այս ամսագիրն ունենալու է և՛ գիտական, և՛ գործնական ուղղվածություն և ցանկացած գիտական հոդված կարող է տպագրվել այն դեպքում, երբ հեղինակը բացի գիտական նորույթ ներկայացնելուց, այն կամփոփի նաև գործնական փաստերով:

Այս նախաձեռնության շրջանակներում ՀՀ փաստաբանների պալատը կհամագործակցի Բարձրագույն որակավորման կոմիտեի հետ, որպեսզի ամսագրում տպագրված հոդվածները համարվեն գիտական հոդվածներ և հաշվի առնվեն

թեկնածուական կամ դոկտորական ատենախոսությունները պաշտպանության ներկայացնելիս:

«Փաստաբանների պալատ» գիտագործնական ամսագիրը մի կողմից կբարձրացնի ՀՀ փաստաբանների հեղինակությունը նաև գիտակրթական առումով և բացի այդ կնպաստի գիտությամբ զբաղվող փաստաբանների մասին իրազեկվածության բարձրացմանը:

ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻԵԴ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Փաստաբաններն իրենց գործունեության ընթացքում անխուսափելիորեն առնչվում են ինչպես ՄԻԵԴ որոշումներին, այնպես էլ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներին, որոնց քանակը խիստ ծավալուն է և թեև համակարգման աշխատանքներ կատարվում են՝ ըստ տարբեր չափանիշների, այդուհանդերձ որևէ ձևով չեն համակարգվում փաստաբանությանը կամ իրավական օգնության տրամադրմանն առնչվող որոշումները:

Նախատեսվում է կազմել և ՀՀ փաստաբանների պալատի կայքում տեղադրել ՄԻԵԴ և ՀՀ վճռաբեկ դատարանի այն որոշումների մասին ամփոփ տեղեկություններ, որոնք վերաբերում են փաստաբանական գործունեությանը:

Այսօր առկա են ՄԻԵԴ բազմաթիվ որոշումներ, որոնցով արձանագրվել է պաշտպանության իրավունքի խախտում, ՀՀ վճռաբեկ դատարանն է անդրադարձել փաստաբանների խելամիտ վարձատրությանը և փաստաբանության ինստիտուտին վերաբերող այլ իրավական նորմեր է մեկնաբանել: Ակնհայտ է, որ փաստաբանների համար իրենց գործունեության շրջանակներում օգտակար և կիրառելի կլինեն նման դատական ակտերի մասին տեղեկությունները, որոնք ամփոփելու և հրապարակելու գործառույթ կիրականացնի ՀՀ փաստաբանների պալատը:

ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանների պալատը նախկինում կյանքի է կոչել բազմաթիվ նախաձեռնություններ և իրականացրել է մի շարք միջոցառումներ, որոնք նպաստել են միջհամայնքային կապերի զարգացմանը: Պալատի միջազգայնացման շրջանակներում

ստորագրվել են համագործակցության բազմաթիվ փաստաթղթեր եվրոպական երկրների պալատների, դրանց համակարգող կառույցների, ԱՊՀ երկրների պալատների միջև: ՀՀ փաստաբանների պալատը ակտիվ համագործակցում է ֆրանսիայի մի շարք տարածքային պալատների հետ: Սերտ կապեր են ձևավորվել Ռուսաստանի Դաշնության փաստաբանների դաշնային պալատի, Վրաստանի, Բելոռուսի, Ուկրաինայի, Մոլդովայի փաստաբանների պալատների միջև:

Համավարակով և երկրում ստեղծված պատերազմական իրավիճակով պայմանավորված համագործակցության միջոցառումների պարբերականությունը խիստ նվազել է, որպիսի պայմաններում անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել շփումների մակարդակը վերականգնելու ուղղությամբ:

ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ ԵԱՏՄ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՓՈԽՃԱՆԱՉՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒՄ

Հայաստանի փաստաբանները շատ հաճախ բախվում են խնդիրների այլ երկրներում փաստաբանի կարգավիճակով իրավաբանական օգնություն տրամադրելիս: Մի շարք երկրներում նման հնարավորությունը բացակայում է, կան երկրներ որտեղ օտարերկրյա փաստաբանի հնարավորությունները խիստ սահմանափակ են: Պետք է փաստել, որ ի տարբերություն նշվածի Հայաստանում գործում է օտարերկրյա փաստաբանների հավատարմագրման ճկուն մեխանիզմ: Նպատակահարմար է ՀՀ փաստաբանների պալատի միջազգային կապերի շրջանակներում նախաձեռնել քննարկումներ ՀՀ փաստաբանների կարգավիճակի ճանաչումն ապահովելու նպատակով: Այդպիսի նախադրյալ կարող է հանդիսանալ Հայաստանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը, ինչպես նաև բազմաթիվ ՌԴ քաղաքացիների ներկայությունը Հայաստանում:

Նախատեսվում է տարբեր երկրների փաստաբանական համայնքների հետ բանակցություններ վարել փաստաբանական գործունեության արտոնագրերի փոխադարձ ճանաչման վերաբերյալ: